https://doi.org/10.46991/hc.2024.21.2.109

Press Appeal to the 2016 April War

Iskuhi Avanesyan
https://orcid.org/0009-0005-2491-5058
PhD in History, Associate Professor, Institute of History of the NAS of the RA
Researcher at the Department of History of the Armenian Question and Armenian Genocide
iskuhi82@mail.ru

Key Words*:* military actions, information warfare, coverage of events, international media, Armenian press, Azerbaijani propaganda.

The April 2016 war, also known as the four-day war, was a large-scale military action between the Defense Army of the Republic of Artsakh and the armed forces of the Republic of Azerbaijan along the entire Artsakh-Azerbaijan line of contact. The four-day fighting prevented a full-scale war in the short term and failed Baku's plans to break the bargaining process and gain leverage to force decisions. This article presents the coverage of the April 2016 war by the news media of the conflicting parties and the international information field.

As a result of the conducted research, it can be argued that the April war once again showed the importance of the media in covering military operations. It is noteworthy that the Armenian media were able to carry out coordinated work, which did not allow panic and fear to cause in the Armenian society. The Azerbaijani side stressed the role of the media in information activities and the accompanying armed clashes. The proof of this was the number and nature of the materials posted in the Azerbaijani media during the days of the war, which represented the course of events from the Azerbaijani point of view.

The methodological basis of the article consists of methods of analysis, study of facts, comparison of various materials.

As a result of the study, we conclude that the aggression unleashed by Azerbaijan indirectly contributed to the fact that, thanks to the media, especially international media, the Nagorno-Karabakh Republic became the center of attention of the international community.

Մամուլի անդրադարձը 2016թ. ապրիլյան պատերազմին

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 109-119.

Received: 15.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 18.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

Press Appeal to the 2016 April War

Մամուլի անդրադարձը 2016թ. ապրիլյան պատերազմին

Իսկուհի Ավանեսյան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի գիտաշխատող

Հիմնաբառեր ՝ռազմագործողություններ, տեղեկատվական պատերազմ, իրադարձությունների լուսաբանում, միջազգային լրատվամիջոցներ, հայկական մամուլ, ադրբեջանական քարոզչություն:

2016թ. ապրիլյան պատերազմը, որը հայտնի է նաև քառօրյա պատերազմ անունով, լայնամաշտաբ ռազմական գործողությունն էր Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի և Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի միջև արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով: Քառօրյա մարտերը կարճաժամկետ կտրվածքով կանխեցին լայնամասշտաբ պատերազմը, տապալեցին բանակցային գործընթացում բեկում մտցնելու և լուծում պարտադրելու լծակ ստանալու ՝Բաքվի պլանները:

Սույն հոդվածում ներկայացված է 2016թ. ապրիլյան պատերազմի ընթացքում հակամարտող կողմերի լրատվականների և միջազգային մեդիա դաշտի կողմից պատերազմի լուսաբանումը:

Իրականացված հետազոտության արդյունքում կարելի է պնդել, որ ապրիլյան պատերազմը ևս մեկ անգամ ցույց տվեց ռազմական գործողությունների լուսաբանման գործում ԶԼՄ-ների կարևորությունը: Հատկանշական է, որ հայկական լրատվականները կարողացան իրականացնել համակարգված աշխատանքը, ինչը թույլ չտվեց հայ հանրության մեջ խուճապի, վախի առաջացմանը: Ադրբեջանական կողմը կարևորեց լրատվամիջոցների դերը զինված ընդհարմանն ուղեկցող տեղեկատվական գործողություններում: Դրա ապացույցն էին պատերազմի օրերին ադրբեջանական մեդիա-դաշտում զետեղված նյութերի քանակը և բնույթը, որոնք ներկայացնում էին ադրբեջանական տեսանկյունից իրադարձությունների ընթացքը:

Հոդվածի մեթոդաբանական հիմքը կազմում են վերլուծության, փաստերի քննության, տարբեր նյութերի համադրման մեթոդները:

Հետազոտության արդյունքում հանգում ենք եզրակացության, որ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիան անուղղակիորեն նպաստեց նրան, որպեսզի ԶԼՄ-ների, հատկապես միջազգային լրատվամիջոցների շնորհիվ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հայտնվեց միջազգային հանրության ուշադրության կենտրոնում:

Обращение Прессы к апрельской войне 2016 г.

Искуи Аванесян

Кандидат исторических наук, доцент, Институт истории НАН РА

Научный сотрудник отдела истории Армянского вопроса и Геноцида армян

Ключевые слова: военные действия, информационная война, освещение событий,

международные средства информации,
армянская пресса, азербайджанская пропаганда.

Апрельская война 2016 г., так же известная как четырехдневная война, была широкомасштабным военным действием между Армией обороны Республики Арцах и вооруженными силами Азербайджанской Республики по всей арцахо-азербайджанской линии соприкосновения. Четырехдневные бои в краткосрочной перспективе предотвратили полномасштабную войну, провалили планы Баку внести перелом в переговорный процесс и получить рычаги для принуждения решений.

В этой статье представлено освещение апрельской войны 2016 года со стороны информационных средств конфликтующих сторон и международного информационного поля.

В результате проведенного исследования можно утверждать, что апрельская война еще раз показала важность СМИ в освещении военных действий. Примечательно, что армянские СМИ смогли провести скоординированную работу, что не позволило вызвать панику и страх в армянском обществе.

Азербайджанская сторона подчеркнула роль СМИ в информационных действиях, сопутствующие вооруженные столкновения. Доказательством этого были количество и характер материалов, размещенных в азербайджанских СМИ в дни войны, которые представляли ход событий с азербайджанской точки зрения.

Методологическую основу статьи составляют методы анализа, изучения фактов, сопоставления различных материалов.

В результате исследования можно сделать вывод, что агрессия, развязанная Азербайджаном, косвенно способствовала тому, чтобы благодаря СМИ, особенно международным СМИ, Нагорно-Карабахская Республика оказалась в центре внимания международного сообщества.

* * *

Ներածություն. Ժամանակակից համաշխարհային փորձը վկայում է, որ հակառակորդի դեմ գործողությունների իրականացման համար տեղեկատվական հոսքերի ազդեցությունը կարող է պետությունների ձեռքում հզոր զենք լինել, իսկ այդ զենքին դիմագրավելու ներուժ չունեցող պետությունները կարող են հայտնվել պարտվողների շարքերում: Այդ առումով առավել կարևոր է իրադարձությունների լուսաբանումն, քարոզչությունը, լրատվամիջոցների դերակատարությունը:

Ինֆորմացիոն տարրը, որ ժամանակակից պատերազմներում կարևոր նշանակություն ունի, կազմում է պատերազմի բաղկացուցիչ մասը: Այդ նպատակով լրատվամիջոցներին կարելի է բաժանել 3 խմբի.

•Անկողմնակալ և օբյեկտիվ տեղեկացում՝ ելնելով հումանիտար և համամարդակային սկզբունքներից,

•Տեղեկացում՝ սատարելով սեփական երկրի ռազմական քաղաքականությունն ու ջանքերը,

•Տեղեկացում՝ սատարելով հակառակորդի ռազմական քաղաքականությունն ու ջանքերը:

Սույն հոդվածը նպատակ ունի վեր հանելու 2016թ. ապրիլյան պատերազմի ընթացքում մամուլի անդրադարձը ռազմագործողություններին և այդ նպատակով խնդիր է դրվել.

1. Ներկայացրելու ադրբեջանական տեղեկատվական քաղաքականության հիմնական շեշտադրումները,
2. քննելու հայկական և միջազգային որոշ լրատվամիջոցների՝ պատերազմական գործողությունների լուսաբանումը:

2016թ. Ադրբեջանը խախտելով 1994թ. մայիսի 12-ին ձեռք բերված կրակի դադարեցման եռակողմ (Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջանի Հանրապետություն-Հայաստանի Հանրապետություն) համաձայնագիրը և Ղարաբաղյան հակամարտությունը բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու միջազգային պարտավորվածությունները, սկսեց նախահարձակ ռազմական գործողություններ հակամարտ զորքերի սահմանագծի ամբողջ երկայնքով: Պատերազմի և հաջորդ օրերին եթե հայկական մեդիա տիրույթում փորձ էր արվում ներկայացնել փաստերը, տեղում լուսաբանելով իրական դեպքերը, ապա ադրբեջանական կողմը ավելի շատ հենվում էր քարոզչական տեղեկատվության վրա և ի տարբերություն հայկական կողմի, արգելում միջազգային լրատվականներին լուսաբանելու իրադարձությունները:

Ուսումնասիրությունն իրականացվել է առկա փաստերի համալիր քննության, համադրման միջոցով:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ 2016թ. պատերազմի ընթացքում ադրբեջանական մամուլի ջանքերը քարոզչական աշխատանքներում և ապատեղեկատվության մեջ, սպասված արդյունքը չտվեց, ավելին, սանձազերծած ագրեսիան անուղղակիորեն նպաստեց նրան, որ նաև Ղարաբաղյան հակամարտության խնդիրը կրկին հայտնվեց միջազգային կառույցների օրակարգում:

Պատերազմի լուսաբանումը հայկական մեդիա տիրույթում: 2016թ. ապրիլի սկզբին ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում իրավիճակի կտրուկ սրումը պատմության մեջ մտավ իբրև քառօրյա պատերազմ: Ապրիլյան ագրեսիան Ադրբեջանի հերթական փորձն էր՝ ուժի միջոցով լուծելու ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտությունը: Սանձազերծելով ռազմական գործողություններն Արցախում՝ Ադրբեջանը չկարողացավ հասնել զգալի հաջողությունների, թեև երկար տարիներ նախապատրաստվել էր դրան՝ հսկայական գումարներ տրամադրելով ժամանակակից սպառազինությունների ձեռքբերման համար: Կենդանի ուժի ու տեխնիկայի զգալի կորուստներ կրելով՝ Ադրբեջանը հարկադրված էր 2016թ. ապրիլի 5-ին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ դադարեցնելու ռազմական գործողությունները և վերականգնելու հրադադարը՝ համաձայն 1994թ. զինադադարի հաստատման մասին եռակողմ համաձայնագիրը[Բաղդասարյան, 2017, 37-48]:

Ապրիլ ամսվա առաջին օրերի դեպքերը, որը ցնցեց Հայաստանը և հայկական սփյուռքը, դարձավ հրադադարի 22 տարիների ամենադինամիկ իրադարձությունը: Այդ օրերին հայկական մեդիա տիրույթում [Մեդիամաքս, Ռազմինֆո, Սիվիլնետ, 168 ժամ, Օրագիր, Հետք և այլն] արտակարգ ռեժիմով ներկայացվում էին մարտական թեժ կետերից հաղորդագրություններ, տեսանյութեր: Լրատվամիջոցները տեղեկությունները ստանում էին ԼՂՀ ՊՆ մամուլի հաղորդագրություններից, ԼՂՀ մամուլի ասուլիսներից, ՀՀ ՊՆ մամուլի քարտուղարի ֆեյսբուքյան

հրապարակումներից և հարցազրույցներից, ինչպես նաև կատարում էին սեփական ուսումնասիրություններ:

Ապրիլի 2-ին հայկական լրատվամիջոցների էջերում սկսեցին տարածվել ՊԲ հաղորդումները, որի համաձայն ժամը 8:18-ին, ադրբեջանական բանակը հարձակողական գործողություններ է սկսել սահմանի ողջ երկայնքով, իսկ 9:10-ին, տեղեկացրեց, որ ԼՂ հակաօդային պաշտպանության ուժերն առաջնագծի հյուսիսային ուղղությամբ ոչնչացրել են Ադրբեջանի զինված ուժերի մեկ ուղղաթիռ: Նույն օրը, ժամը 10:25-ին Արցախի ՊԲ-ն հաղորդագրություն տարածեք, ըստ որի, ժամը 8:30-ի սահմանում ադրբեջանական զինուժը «Գրադ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգով հրետակոծել է հայկական գյուղերը և Մարտունիի պաշտպանական շրջանի ուղղությամբ զոհվել է մեկ երեխա՝ Վաղինակ Գրիգորյանը (ծնված՝ 2004 թ.), ևս երկու երեխա ծանր վիրավորվել են: Կեսօրին հայտարարվեց, որ հակաօդային պաշտպանության ուժերը հարավ-արևելյան ուղղությամբ ևս մեկ ուղղաթիռ են խոցել, իսկ հյուսիսարևելյան ուղղությամբ՝ ևս երկու ԱԹՍ [ԱՀ ՊՆ Հաղորդագրություն, 02 ապրիլի, 2016թ]:

Հայկական կողմի տեղեկատվական գործողություններն ավելի համակարգված էին ու խորքային: Բազմիցս տարբեր լրատվամիջոցներով լուսաբանվեց, որ ադրբեջանական զինվորների գործողությունները նման են Իսլամական պետության ահաբեկիչների ձեռագրին: Այս քայլով հակառակորդը սկսեց ասոցացվել ահաբեկիչների հետ, իսկ տեղեկատվական պատերազմում մեծ կշիռ ունի հակառակորդին երկարաժամկետ բացասական կերպարի վերագրումը: Այսպես, եթե ադրբեջանական քարոզչամեքենայի աշխատանքները հիմնականում կարճաժամկետ լսարանի վրա ազդեցություն թողնելու համար էր, ապա հայկական կողմից հակառակորդին ահաբեկիչ-պետություն իմիջի վերագրումը երկար ժամանակ կարող է պիտակ դառնալ տվյալ պետության վարկանիշին: Դրա մասին է վկայում այն փաստը, որ այդ օրերին և հետագայում միջազգային լսարանի կողմից սկսեց ավելի շատ շրջանառվել «Ալիև-բռնապետ» բառակապակցությունը [Hadrian W., Armenia and Azerbaijan: The war you aren’t hearing about , April 07, 2016]:

Հայկական լրատվամիջոցների խորքային աշխատանքի շնորհիվ հայկական որևէ կայք, որևէ լրատվամիջոց ադրբեջանական ապատեղեկատվության զոհ չգնաց:

Հատկանշական է, որ պատերազմի գոտուց համացանցում տարածվող Ադրբեջանի, ԼՂՀ-ի ու ՀՀ-ի պաշտպանական գերատեսչությունների տարածած տեղեկատվությունները հակասում էին միմյանց: Ադրբեջանական քարոզչական գործունեության ձևերից է ապատեղեկատվություն տարածելու միջոցով լարվածության հրահրումը, խուճապ առաջացնելը, սակայն հակառակ սպասումների դա տեղի չունեցավ: Պատերազմի օրերին հայկական կողմի տեղեկատվական գործողությունները եղան հիմնականում համակարգված:

Պատերազմի օրերին և հետագայում հայկական կողմը լրատվական հարթակներում սկսեց քննարկել Ադրբեջանում ապրող կովկասյան և իրանական ծագում ունեցող տեղաբնիկների հիմնախնդիրները: Սոցցանցային լրահոսից հնարավոր դարձավ պարզելու, որ Ադրբեջանի տված զոհերի թվում բավականին մեծ թիվ են կազմում տեղաբնիկները(թալիշներ, թաթեր, լեզգիներ): Այդ օրերին, տեղաբնիկների որոշ ներկայացուցիչներ հորդորեցին իրենց համայնքներին չմասնակցել պատերազմին, քանզի այն իրենց պատերազմը չէ: Այդ մասին է վկայում թաթական «Շիրվանի ազատագրության ճակատ» քաղաքական կազմակերպության հայտատարությունը, ըստ որի սեփական ժողովրդի զավակները չպետք է ենթարկվեն Բաքվի բռնապետական վարչակարգին,

փոխարենը պետք է թողնեն արցախյան դիրքերը և վերադառնան իրենց բնակավայրեր[Նազարյան, 2017, 54-63]: Հայկական մեդիա դաշտում Ադրբեջանի փոքրամասնություններին անդրադառնալը, նրանց խնդիրների քննարկումը հնարավորություն տվեց ևս մեկ անգամ վեր հանելու Ադրբեջանում առկա ներքին խնդիրները, բռնապետական իշխանության նկրտումները:

Այսպես, ամփոփելով 2016թ. պատերազմի իրողությունները հայկական ԶԼՄ-ներում, հարկ է նկատել, որ հայկական մեդիա դաշտի համակարգված աշխատանքը հնարավորություն չտվեց ադրբեջանական կողմին հայ հանրության մեջ առաջացնել խուճապը, տարածել ապատեղեկատվություն:

Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունը պատերազմի օրերին: Քառօրյա պատերազմի ժամանակ և դրանից հետո ակտիվ էր ադրբեջանական տեղեկատվական-քարոզչական ոլորտը, որը նպատակ ուներ ցույց տալ, որ նախորդ տասնամյակների պատրաստությունները անտեղի չեն եղել, ինչպես նաև միջազգային հանրության աչքում հայերին ներկայացնել որպես պատերազմի նախաձեռնող կողմ, ապա՝ թաքցնել պատերազմի արդյունքում գրանցած սեփական անհաջողությունները, կորուստները: Այդ օրերի ռազմագործողությունները ադրբեջանական մեդիայում տարբեր բնորոշումներ ստացավ՝ «քառօրյա պատերազմ», «սահմանային լարվածություն», «զինված ընդհարումներ», «թեժ մարտեր», «նոր պատերազմ», «ղարաբաղյան երկրորդ պատերազմ», «հայկական սադրանք», «զինված օպերացիա», «բռնություն Ղարաբաղում», «ազատագրական պատերազմ» և այլն: Ռազմական գործողությունների առաջին ժամերից ադրբեջանական լրատվամիջոցներն ակտիվություն չդրսևորեցին: Միայն, ժամը 9:30-ին Ադրբեջանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը և լրատվամիջոցները հաղորդում ներկայացրեցին մարտերը սկսելու մասին: Մեղադրելով հայկական կողմին, հայտնեցին, որ ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումները փորձում են կասեցնել ադրբեջանական բնակատեղիներին հարվածող հայկական ստորաբաժանումներին, և հերքում է ադրբեջանական ուղղաթիռ ոչնչացնելու մասին տեղեկությունը: Իսկ ժամը 17:00-ի մոտակայքում Ադրբեջանը պաշտոնապես հայտնեց, որ մարտական գործողությունների ընթացքում ունի կորուստներ: Միաժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ Ադրբեջանը իր վերահսկողության տակ է վերցրել «Լելե Թեփե» բարձունքը և այլ բարձունքներ հայկական Թալիշ, Սեյսուլան գյուղերի շրջանում (խոսքը վաղուց լքված Սեյսուլան բնակատեղիի մասին է, այլ ոչ թե Նոր Սեյսուլան բնակատեղիի)[ANSPRESS TV]: Հաջորդ օրերին ադրբեջանական լրատվամիջոցները հղում կատարելով պաշտոնական հայտարարություններին, տեղեկություններ են հաղորդում նոր տարածքներ գրավելու, զինված ուժերում ունեցած կորուստների մասին:

Պատերազմում հաղթող ներկայանալու ցանկությունն Ալիևի ռեժիմի կողմից սկսեց դրսևորվել արդեն հրադադարի հայտարարման պահից՝ վերահսկելի լրատվամիջոցներով: Լրագրողների միջոցով բանակը սկսեց ներկայացնել բացարձակ հորինված, թատերականացված նյութեր, որտեղ ցուցադրվում էին Լեռնային Ղարաբաղի գյուղեր և քաղաքներ, որոնք, իբր, գտնվում են ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ: Այսպես, ANS PRESS հեռուստաընկերությունը [ANSPRESS TV,04.04.2016] ռեպորտաժներ է ներկայացրել իբր Թալիշ գյուղից, չնայած

արտասահմանյան լրագրողները հայկական կողմից արդեն այցելել էին բնակավայր՝ համոզվելով, որ այն հայկական կողմի վերահսկողության տակ է:

Իբրև օբյեկտիվ տեղեկատվություն հաղորդելու նպատակով, ադրբեջանական կողմը թույլ տվեց օտարերկրյա լրատվամիջոցներին լուսաբանելու իրադարձությունները, սակայն պատշաճ մեկնաբանությունը առիթ դարձան լրագրողների գործունեության և նրանց ազատությունների ոտնահարման համար: Ըստ «Լայֆ Նյուզ»-ի լրագրողների, Ադրբեջանի իշխանությունները փորձել են ստիպել լրագրողներին հրապարակել իրենց համար շահավետ տեղեկատվություն, լուսաբանել իրադարձությունները «այնպես, ինչպես իրենց է անհրաժեշտ» [МВД Азербайджана просило журналистов искажать данные о ситуации в НКР, 05.04.2016], իսկ լրագրողները հրաժարվել են, որին հաջորդել է նրանց վտարումն Ադրբեջանից:

Պատերազմի օրերին ադրբեջանական ԶԼՄ-ներում հայկական բանակը բնութագրվում էր որպես «անմարտունակ, բարոյալքված, զենքի պակաս ունեցող բանակ, որը մեծ կորուստներ կրեց ռազմական գործողությունների հենց առաջին օրվանից»: Պատահական չէ, որ պատերազմի առաջին օրը ադրբեջանական լրատվամիջոցները ներկայացնում էին հայկական կողմի զոհերի, ոչնչացված զինվորական տեխնիկայի մասին ինֆորմացիա: Մինչդեռ ադրբեջանական կողմի կորուստների, զոհերի թվի մասին սակավ տեղեկատվություն է մատուցվել: Այս առումով տեղին է նշել, որ անկախ meydan.tv-ի դեմ քրեական գործ է հարուցվել, երբ կայքում զետեղվել է նյութ այն մասին, որ ադրբեջանական կողմի զոհերի թիվը հասնում է 93-ի, այն դեպքում, երբ պաշտոնական աղբյուրները նշում էին ընդամենը 31 զոհի մասին[Против Интернет-ресурса Meydan TV начато уголовное дело и его фигурантами являются около 15 журналистов, 21.04.2016]:

Ադրբեջանական քարոզչական գործունեության ձևերից է ապատեղեկատվություն տարածելու միջոցով լարվածության հրահրումը, խուճապ առաջացնելը: Այսպես, ադրբեջանական լրատվամիջոցների հերթական ապատեղեկատվության օրինակներից է Ջրականի (Ջաբրայելի)և Վարանդայի (Ֆիզուլի) <<գրավումը>>: Ըստ <<News.ar>> լրատվամիջոցի՝ ադրբեջանցի զինվորները հասել են այդ շրջանների վարչական սահմաններին և <<լուսանկարել են >> իսկ <<azernews.ar>> գրում է, որ <<հայերի մեջ խուճապ է, ավելի քան 3000 հոգի լքել են գրավյալ Լեռնային Ղարաբաղի շրջանը>>: <<Այն բաներից հետո, երբ շփման գծում Ադրբեջանը հուժկու հարված տվեց Հայաստանի զինված ուժերի սադրանքներին, խուճապ է տարածվել այն մարդկանց շարքերում, ովքեր բնակություն են հաստատել գրավյալ տարածքներում>>: Կայքը հավելում է նաև, որ ադրբեջանական բանակը ոչնչացրել է հակառակորդի մոտ 370 զինվոր[Նազարյան, 2017, 74]: Ադրբեջանական ԶԼՄ-ները իրենց քարոզչական աշխատանքներում «խաղաղասեր, միջազգային իրավունքը պահպանող պետության, իր հողերը, խաղաղ բնակչությանը պաշտպանողի, հայկական սադրանքին պատասխանողի» դիրքերից հանդես գալով, կոնֆլիկտի «մեղավոր» էին ներկայացնում հայկական կողմին:

Պատերազմի հենց առաջին օրերից ԶԼՄ-ներում շրջանառվում էր այն տեսակետը, որ ադրբեջանական կողմը պատրաստ է դադարեցնել կրակը, սակայն հայկական կողմը շարունակում է զինված գործողությունները: Այդ մասին է վկայում ապրիլի 3-ին Ադրբեջանի ՊՆ՝ կրակը միակողմանի դադարեցնելու մասին պաշտոնական հայտարարությունը, որը ևս քարոզչական նպատակով օգտագործվեց ադրբեջանական լրատվամիջոցների կողմից: Նման հայտարարությունները արվում էին այն դեպքում, երբ ադրբեջանական կողմը ապրիլի 3-ին՝

առավոտյան ժամը 07:05-ին առաջնագծի հարավային ուղղությամբ վերսկսել էր ագրեսիվ ռազմական գործողությունները՝ կիրառելով զրահատեխնիկա և հրթիռահրետանային միջոցներ[ԱՀ ՊԲ Հաղորդագրություն, 03.04.2016]:

Բազմաթիվ են վկայությունները այն մասին, որ ադրբեջանական մամուլը ուղղորդվելով պետական համակարգից, լծվել էին իրողությունները կեղծելու, ներքին և արտաքին լսարաններին ներկայացնելու այն ինչ ցանկանում էր Ադրբեջանի իշխանությունը:

Այսպիսով, Ադրբեջանը 2016թ. ապրիլյան պատերազմում կարևորելով լրատվամիջոցների դերը, փորձեց լուծել մի քանի կարևոր խնդիր՝ հայրենասիրական ոգու բարձրացում, ռազմական ուժի ցուցադրություն, նախագահի հեղինակության բարձրացում, իրադարձությունների կեղծում: Քառօրյա պատերազմը դարձավ ևս մի կարևոր թեմա, որի շուրջ ադրբեջանական քարոզչամեքենան շարունակեց կառուցում է իր տեղեկատվական քաղաքականությունը՝ ուղղված թե՛ ներքին, թե՛ արտաքին լսարաններին:

Ադրբեջանի ապակառուցողական մոտեցումները դրսևորեցին նաև տեղեկատվական ոլորտում, և տեղեկատվական փակ համակարգը բերեց նրան, որ հայկական կողմի տեղեկատվական քաղաքականության դերն ավելի մեծացավ:

Միջազգային մամուլի լուսաբանումը: Իրադարձությունները ակտիվ լուսաբանվեց նաև միջազգային լրատվամիջոցների կողմից: Այդ օրերին Ադրբեջանի սանձազերծած հարձակողական գործողությունը անուղղակիորեն նպաստեց, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հայտնվի միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Արցախում տեղի ունեցող իրադարձությունները դարձան գլխավոր թեմա միջազգային այնպիսի լրատվական կայքերում և հեռուստատեսային ալիքներում, ինչպիսիք են՝ «BBC»-ն, «Euro News»-ը, «CNN»-ը, «New York Times»-ը, «The Washington Post»-ը, «Aljazeera»-ն և այլն: Այդ լրատվամիջոցների ներկայացուցիչներ եղան Արցախում և տեղում լուսաբանեցին իրադարձությունները: Նրանք Հայաստանի տարածքով առանց որևէ խոչընդոտի հասան Ստեփանակերտ, որտեղ անմիջապես հավատարմագրում անցնելուց հետո քաղաքացիական փոխադրամիջոցներով մեկնեցին շփման գծի երկայնքին մոտ բնակավայրեր, հատկապես Մարտակերտ և Մարտունի: Հատկանշական է, որ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը միջազգային լրատվամիջոցներին տրամադրել էր արբանյակային անվճար հեռարձակման հնարավորություն, ինչը նպաստեց նրանց սեփական նյութերը տեղում պատրաստելու: Հարկ է նկատել, որ այդ օրերին Ադրբեջանը չհամագործակցեց միջազգային լրատվամիջոցների հետ: Այդ մասին կարծիք հայտնեց վրացական «Ռուսթավ-2» հեռուստաընկերության լրագրող Դավիթ Կակուլիան, ով պատերազմի օրերին գտնվում էր Արցախում: Ըստ վրաց լրագրողի. «Տեղեկատվական պատերազմում հաղթեց Երևանը: Այս փաստը հաստատում էին նաև տեղում աշխատող միջազգային լրագրողները: Հաղթանակը պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայկական կողմից, ընդհուպ մինչև շփման գիծ, մամուլի համար սահմանափակումներ չկային: Ադրբեջանում մի շարք բյուրոկրատական գործընթացներով պետք էր անցնել և ապա հավատարմագրման համար որոշ ժամանակ սպասել» [Վրաստանցի լրագրողները քննարկել են Ղարաբաղյան հակամարտությունը, Սիմոնյան Ա., 19.04.2016]: Հատկանշական է, որ միջազգային առաջատար լրատվամիջոցներն ադրբեջանական

պաշտոնական տեսակետի հետ մեկտեղ ներկայացնում էին պաշտոնական Ստեփանակերտի տեսակետը, զրույցներ, տեսանյութեր հրապարակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնյաների հետ: Լրագրողներին հստակ ներկայացվում էր, որ ռազմական գործողությունները ոչ թե Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի, այլ՝ Ադրբեջանի և Արցախի միջև է: Սա տեղեկատվական դաշտում որոշակի ձեռքբերում էր և անհանգստություն առաջացրեց Ադրբեջանի իշխանությունների մոտ, քանի որ վերջինիս հետ որպես հավասար կողմ ներկայացվում էր հենց Արցախի Հանրապետությունը: Միաժամանակ Ադրբեջանի կողմից կազմակերպած էսկալացիան անուղղակիորեն նպաստեց, որ Արցախի Հանրապետությունը հայտնվի միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Չնայած, որ Ադրբեջանը մեծ ջանքեր է գործադրում միջազգային հանրության մոտ իրեն «զոհի կարգավիճակում» ներկայացնելու, այնուամենայնիվ արևմտյան լրատվամիջոցները տեղեկատվությունը ներկայացնում էին բազմակողմանի:

Ռազմական գործողությունների վերսկսման, ապա հակամարտող կողմերի պաշտոնական հաղորդումներին, կրած կորուստների, փոխադարձ մեղադրանքների մասին տեղեկություններ սկսեցին հաղորդել «Euronews», «Associated Press», «ABC News»-ը, «The Washington Post»-ը, «BBC»-ն, «CNN»-ը: Հղելով ԼՂՀ մամուլի ծառայությանը, «Associated Press»-ը հայտնում է, որ Ադրբեջանը կործանիչներ և ծանր հրետանի է օգտագործում Լեռնային Ղարաբաղի սահմանին: Մեջբերելով Ադրբեջանի ՊՆ-ի և Արցախի ՊՆ-ի հայտարարությունները, «The Washington Post»-ը հրապարակեց 31 զոհերի մասին [At least 31 reported killed in fighting between Armenian, Azerbaijani forces]: Դեպքերի ընթացքի, զոհերի ու վիրավորների մասին հաղորդում տվեց նաև «BBC»-ն [Nagorno-Karabakh violence: Worst clashes in decades kill dozens, 04.042016]:

Կարևոր հանգամանքն էր նաև այն, որ առաջատար լրատվամիջոցներն Արցախի վերաբերյալ պատրաստված իրենց տեսանյութերի մեծ մասում ադրբեջանական պաշտոնական տեսակետի կողքին ներկայացնում էին նաև պաշտոնական Ստեփանակերտի տեսակետը՝ զրուցելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնյաների հետ: Դրանց շարքում ամենաքննարկվածը CNN-ի լրատվական թողարկումն էր, որի ժամանակ ուղիղ կապ հաստատվեց՝ Էլմար Մամեդյարովի և Կարեն Միրզոյանի հետ՝ որպես հակամարտության կողմերի արտգործնախարարներ[Nagorno Karabakh Foreign Minister to CNN It’s not about territory, it’s about self determination]: Արտերկրում գտնվող ԼՂՀ ներկայացուցիչներն այդ օրերին նույնպես միջազգային մամուլի ուշադրության կենտրոնում էին: Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանի Դաշնությունում, Ավստրալիայում և այլ երկրներում Արցախի ներկայացուցիչները հնարավորություն ստացան իրենց տեսակետը հայտնել և բարձրաձայնել ադրբեջանական ագրեսիայի մասին այնպիսի հեղինակավոր մեդիա ընկերությունների եթերում, ինչպիսին են France 24-ը, ABC News-ը, Sputnik-ը, Al-Masdar-ը և այլն:

Պատերազմը լուսաբանեց նաև արաբական միջազգային «Al Jazeera» տարածաշրջանային հեռուստաընկերությունը սկսած ապրիլի 3-ից: Նախ հոդված հրապարակեց ռազմական գործողությունների մասին, ապա ղարաբաղյան հակամարտությանն անդրադարձավ ընդարձակ ռեպորտաժով, որում նշվեց, որ ռազմական գործողությունները սանձազերծել է Ադրբեջանը [Dozens killed in Nagorno-Karabakh clashes, 03.04.2106]: Նման տեսակետը վկայում է լրատվության հասցեական մոտեցումն: Այդ օրերին առաջատար վերլուծական ընկերությունները տպագրեցին

հոդվածներ, որոնցում փորձ էր արվում հասկանալ ղարաբաղյան հակամարտության պատճառները, կողմերի դիրքորոշումները, ներկա լարվածության պատճառները: Ըստ հիմնական տեսակետների, հրադադարի խախտումն ավելի շատ բխում էր Ադրբեջանի շահերից:

Ապրիլյան իրադարձություններին անդրադարձան նաև իրանական և վրացական լրատվամիջոցները:Չնայան այն հանգամանքին, որ Իրանում թուրքալեզու լրատվականները փորձում էին ադրբեջանական քարոզչությունը առաջ տանել, այնուամենայնիվ պաշտոնական հաղորդումներում իրանական կողմը զերծ էր կողմերից որևէ մեկի հասցեին սուր գնահատականներից, ինչը նկատվեց իրանական մեդիա դաշտում: Բավականին չեզոք դիրք էր գրավել վրացական մամուլը՝ ներկայացնելով միայն ԼՂՀ-ի և Ադրբեջանի տարածած պաշտոնական տեղեկատվությունը:

Պատերազմի առաջին ժամերին իրադարձությունները ակտիվ լուսաբանվեց նաև ռուսական ԶԼՄ-ների կողմից: Հատկապես «Комсомольская правда» , «Gazeta.ru», «Lenta.ru», «Tass.ru», «Ria.ru», որոնք հղում էին կատարում հայկական աղբյուրներին, մասնավորապես՝ ԼՂՀ ՊՆ մամուլի ծառայությանը: Չնայած դրան, ականես եղանք նաև ռուսական որոշ լրատվականների կողմից ադրբեջանական ապատեղեկատվություն տարածմանը: Օրինակ, «Lenta.ru»-ն, իրենց գլխավոր նյութերում տեղադրում էին Ադրբեջանի մատնանշած թվերը[Զոհրաբյան, 2017, 122-131]:

Հարկ է նկատել, որ միջազգային լրատվամիջոցների մշտադիտարկումը վկայում էր մի բան՝ հոդվածներում հիմնականում հստակորեն չէր նշվում պատերազմի սանձազերծող կողմը:

Եզրակացություններ: Ամփոփելով խնդրո առարկան, հանգել ենք հետևյալ եզրահանգումների.

1. Ապրիլյան պատերազմը ցույց տվեց ռազմական գործողությունների լուսաբանման գործում լրատվամիջոցների կարևորությունը: Պատերազմական պայմաններում խիստ կարևոր է ստուգված և հավաստի տեղեկությունների հրապարակումը, քանի որ պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ առավել քան երբևէ անհրաժեշտ է պահպանել ճշգրտության կանոնները:
2. Պատերազմի օրերին և հետագայում հայկական լրատվամիջոցները ցուցաբերեցին մասնագիտական պատասխանատվություն: Հայկական մեդիա դաշտի շնորհիվ հակառակորդը <<վաստակեց>> ագրեսիաի հրահրող, ահաբեկչական պետություն պիտակը:
3. Ադրբեջանական մեդիա դաշտը հագեցած էր քարոզչական բնույթի նյութերով, որոնք կոչված էին հասարակության մեջ ամրապնդելու և միավորելու մինչ այդ էլ հետևողականորեն ձևավորված «թշնամի հայի» կերպարը, ապահովելու վրեժխնդրության, հակառակորդի հետ հաշվեհարդար տեսնելու մթնոլորտը, ինչպես նաև Ադրբեջանի դերի նշանակության բարձրացմանը սեփական հասարակության շրջանում:
4. Հակառակ Ադրբեջանի ակնկալիքների՝ հայ հասարակությունը խուճապի չմատնվեց. ավելին՝ համախմբման հզոր ալիք սկսվեց: Իսկ տեղեկատվական դաշտում հայկական կողմի ծավալած գործունեությունն ավելի արժանահավատ եղավ, ինչի մասին փաստում են հատկապես միջազգային առաջատար լրատվամիջոցների մասնագետները:

5. Միջազգային մամուլի անդրադարձը իրադարձություններին հնարավորություն տվեց միջազգային հանրության շրջանակներում կրկին քննարկվի ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության հարցը:

Գրականության ցանկ

Բաղդասարյան Ն., 2017, Ադրբեջանա-Ղարաբաղյան ապրիլյան պատերազմը. հակամարտության կարգավորման հիմնարարա սկզբունքների կիրառումը կողմերին ուղղված քաղաքական զսպման գործիքակազմում, Միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, Դիզակ պլյուս հրատ., էջ 37-48:

Զոհրաբյան Ե., 2017, Ապրիլյան պատերազմի լուսաբանումը միջազգային լրատվամիջոցներում, Հայագիտության հարցեր 3 (12) , Երևան , ԵՊՀ հրատ., էջ 122-131:

Նազարյան Հ., 2017, Տեղեկատվական պատերազմներ և դիվանագիտություն, Երևան, ԵՊՀ հրատ., 144էջ:

Նազարյան Հ., 2017, Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունը ապրիլյան քառօրյա պատերազմում, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Երևան, ԵՊՀ հրատ., № 1 (22), էջ 54-63:

ԱՀ ՊՆ Հաղորդագրություն , http://nkrmil.am/news/view/195, 02 ապրիլի, 2016 թ.:

Hadrian W., Armenia and Azerbaijan: The war you aren't hearing about, http://www.therebel.media/armenia_and_azerbaijan_the_war_you_aren_t_hearing_about, April 07, 2016.

ԱՀ ՊԲ Հաղորդագրություն, http://nkrmil.am/news/view/191, 03.04.2016.

Վրաստանցի լրագրողները քննարկել են Ղարաբաղյան հակամարտությունը, http://www.aliq.ge, 19.04.2016.

ANSPRESS TV, https://www.youtube.com/watch?v=7Ltij8dlgBE 02.04.2016.

МВД Азербайджана просило журналистов искажать данные о ситуации в НКР, https://life.ru/t/%D0%BD%D0%BE%D0%B2%D0%BE%D1%81%D1%82%D0%B8/195000., 05.04.2016.

Против Интернет-ресурса Meydan TV начато уголовное дело и его фигурантами являются около 15 журналистов, https://d9mc3ts4czbpr.cloudfront.net/ru/article/15-zhurnalistov-privlecheny 21.04.2016:

At least 31 reported killed in fighting between Armenian, Azerbaijani forces, https://www.washingtonpost.com, 02.04.2016.

Nagorno-Karabakh violence: Worst clashes in decades kill dozens, http://www.bbc.com/news/world, 04.042016.

Nagorno Karabakh Foreign Minister to CNN It's not about territory, it's about self determination, https://www.youtube.com/watch?v=kmG6qBKrZ9k:

Dozens killed in Nagorno-Karabakh clashes, http://www.aljazeera.com/news/2016/04/ 03.04.2106.